ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՔՈՒՐԴ ԳՐՈՂՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ

Լրացավ 1918 թ. ՍՄԿԿ անդամ, ՀՍՍՀ կուլտուրայի վաստակավոր գործիչ, քուրդ նշանավոր գրող և հասարակական գործիչ Արաբ Շամիլովի ծննդյան 75-ամյակը:

Արաբ Շամիլովը (Արաբե Շամիլո) ծնվել է 1897 թ. Կարսի նահանգի Սուզ քրդական գյուղում:

Հետագա տարիներին նրանց ընտանիքը տեղափոխվում է Ալեքսանդրովկա գյուղը, որտեղ նա սովորում է տեղական դպրոցում: Առաջադիմական հայացքների համար հեռացվելով դպրոցից՝ վերադառնում է հայրենի գյուղ, աշխատում պեմզայի հանքերում, շփվում ռուս և հայ հեղափոխական բանվորների հետ, իսկ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ռուսական մի գնդում ծառայում որպես թարգմանիչ:

1916 թ. աշնանը Արաբ Շամիլովը մեկնում է Սարիղամիշ, որտեղ և մասնակցում է տեղի բոլշևիկյան ընդհատակյա կազմակերպության աշխատանքներին: Նրան հանձնարարվում է թռուցիկներ տարածել և կազմակերպական աշխատանք կատարել: Նա Գ. Հակոբյանի հետ նախապատրաստական աշխատանք է տանում մայիսի 1-ի տոնակատարությունը անցկացնելու համար: Շուտով տեղական իշխանությունները Շամիլովին ձերբակալում են, սակայն մի քանի օրից հետո նա փախչում է հայրենի գյուղ: Տեղական իշխանությունները շարունակում են հետապնդել նրան: 1918 թ. հուլիսին նա անցնում է Ռուսաստան: Ստավրոպոլում Շամիլովը մտնում է առաջին ստավրոպոլյան սովետական գունդը, որպես շարքային կարմիր գվարդիական: 1919 թ. սկզբներին Հյուսիսային Կովկասում, երբ կարմիր բանակը նահանջում էր, նա կարմիր մարտիկների մի մեծ խմբի և հրամանատարների հետ անցնում է Դենիկինի բանակի թիկունքը: Այդ նույն խմբից կազմակերպվում է 500 հոգուց բաղկացած մարտական ջոկատ, որի ղեկավար է նշանակվում Շամիլովը: Ջոկատը թշնամու թիկունքում երկար ժամանակ հերոսաբար պայքարում է, իսկ հետագայում միանում XI կարմիր բանակին: Մարտերում ցուցաբերած քաջության և խիզախության համար Արաբ Շամիլովը պարգևատրվում է հատուկ մարտական զենքով:

1920—1924 թթ. նա սովորում է Մոսկվայի Լազարյան ինստիտուտում: Ավարտելուց հետո կուսակցության Կենտրոնական կոմիտեն Ա. Շամիլովին աշխատանքի է ուղարկում Հայաստանի Կոմկուսի Կենտկոմ՝ որպես հրահանգիչ: 1928 թ. նա ընտրվում է Հայաստանի Կենտգործկոմի անդամ և աշխատում ազգային փոքրամասնության հանձնաժողովում:

Արաբ Շամիլովը ոչ միայն ակտիվ քաղաքական-հասարակական գործիչ է, այլ նաև սովետական քրդական գրականության հիմնադիրներից մեկը: Նրա գրական աշխարհայացքի ձևավորման գործում մեծ ազդեցություն է ունեցել Եղիշե Չարենցը:

Սովետական քրդական մշակույթի զարգացմանը մեծապես նպաստեց ակադեմիկոս Ի. Ա. Օրբելու և Ի. Մարագուլովի օգնությամբ, 1929 թ. Արաբ Շամիլովի ստեղծած քրդական այբուբենը: Նույն թվականին Արաբ Շամիլովը և Մարագուլովը կազմում են «Ինքնուսույց քրդերեն լեզվի» լատինատառ ձեռնարկը: 1931

թ. լույս տեսավ Շամիլովի «Քուրդ հովիվը» պատմվածքը, որը հետագայում թարգմանվել է ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, չալերեն, վրացերեն և այլն:

Բեյրութում քրդերեն հրատարակված այս պատմվածքի առաջաբանում կարդում ենք. «Սովետական երկրում 60 հազար քրդեր գտնըվում են իրենց ծաղկման և բարգավաճման շրջանում, ստացել են գիր ու գրականություն, առաջ են տանում իրենց ազգային կուլտուրան: Մինչդեռ արտասահմանում գտնվող 10 միլիոն քրդերը դեռես զրկված են իրենց ազգային իրավունքներից: Ճնշվում ու հալածվում են...

Այդ իսկ պատճառով մենք ձեռնամուխ եղանք այս գրքի թարգմանությանը և տպագրեցինք, որպեսզի մեր ժողովուրդը նրանից դաս վերցնի և հույս ենք հայտնում, որ աշխատավոր քուրդ ժողովուրդը կըմբռնի նրա քաղաքական ու գեղարվեստական նշանակությունը, նրանից կսովորի, կհասկանա իր հետամնացության և ճնշման պատճառները, պայքարի գործում կլինի արթուն ու խիզախ»:

1930—1931 թթ. լույս են տեսնում Արաբ Շամիլովի «Սուտ դուշակողը» դրաման, և «Ալագյազի քրդերը», «Փոքրիկ հովիվը» պատմըվածքների ժողովածուները:

Ուսանելի լեզվով է գրված նրա «Բարբանդ» (Լուսաբաց) ինքնակենսագրական վիպակը, որի առաջին էջերից ընթերցողը տեղափոխվում է Ղարսի մարզ, ուր կողք-կողքի ապրում էին հայերը և քրդերը, ճնշվում ու հալածվում տեղական իշխանություններից:

1959—1961 թթ. լույս տեսավ Շամիլովի հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը գովերգող «Երջանիկ կյանք» վեպը՝ նախ քրդերեն, ապա հայերեն. 1971 թ. հրատարակվեց Մոսկվայում (ռուսերեն):

Նա մեծ աշխատանք է կատարել գրական քրդերենի ստեղծման ու զարգացման ուղղությամբ: Քաջ ծանոթ լինելով քրդական ժողովրդական բառ ու բանին, Շամիլովն այն կիրառել է իր ստեղծագործություններում, դրանով իսկ նպաստելով գրական քրդերենի զարգացմանը:

Շամիլովը Վիլչևսկու հետ Սովետական Միությունում առաջինը գրեց քրդերենի քերականությունը, որը, սակայն, ժամանակին չի տըպագրվել և, ցավոք, բնագիրը չի պահպանվել: Գտնելով Վիլչևսկու արխիվում բարեբախտաբար պահպանված այդ աշխատության պատճենահանված միակ օրինակից, դա քրդերենի գիտական քննության լավագույն փորձն է: Շամիլովի գրչին են պատկանում լեզվի և պատմության վերաբերյալ մի շարք գիտական աշխատություններ, որոնցից են՝ «Քրդերենի սեռերի կատեգորիան», «Քրդերեն լեզվի իդաֆետուն», «Հոկտեմբերյան հեղափոխությունը», «Ցեղային հարաբերությունները Անդրկովկասի քրդերի մեջ», «Անդրկովկասի քրդերը XIX դ.» և այլ գործեր:

Սովետական կառավարությունը բարձր է գնահատել Արաբ Շամիլովի հասարակական-քաղաքական գործունեությունը՝ նրան պարգևատրելով «Մարտական Կարմիր դրոշի» շքանշանով և մի շարք մեդալներով:

ԿԱՐԼԵՆԵ ՉԱՉԱՆԻ
ՍԻՄԱ ՍԱՄԱԴ